ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Նախագահական իշխանության խորհրդանշան հիմնելու մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 49-րդ և 56-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

1. Հիմնել Նախագահական իշխանության խորհրդանշան:

2. Հաստատել՝

1) Նախագահական իշխանության խորհրդանշանի նկարագրությունը և գործածման կարգը՝ համաձայն 1-ին հավելվածի,

2) Նախագահական իշխանության խորհրդանշանի ձևը՝ համաձայն 2-րդ հավելվածի:

3. Սահմանել, որ՝

1) Նախագահական իշխանության խորհրդանշանն օգտագործվում է Հայաստանի Հանրապետության նորընտիր Նախագահի պաշտոնի ստանձնման արարողության ժամանակ,

2) Նախագահական իշխանության խորհրդանշանը պահվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի նստավայրում:

4. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՍԱՐԳՍՅԱՆ

2013թ. ապրիլի 5
Երևան

Հավելված 1
ՀՀ Նախագահի
2013 թվականի ապրիլի 5 -ի
ՆՀ- 57 -Ն հրամանագրի

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԻ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Նախագահական իշխանության խորհրդանշանն ունի սկավառակի տեսք, որը շրջափակված է միմյանց հերթագայող երկու ութանիստ բազմանկյունաձև երիզով: Սկավառակի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը, որի վերին հատվածում պատկերված է ցորենի երկու հասկ, իսկ ներքևում գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» բառերը:

Նախագահական իշխանության խորհրդանշանը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության դրոշի գույների եռագույն ժապավենի վրա:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված 2
ՀՀ Նախագահի
2013 թվականի ապրիլի 5 -ի
ՆՀ- 57 -Ն հրամանագրի

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԻ
ՁԵՎԸ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ